Digitally signed by GEVORGYAN KHAZHAK 3008660126
Date: 2023.10.04 12:18:07 AMT

# ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Սյունիքի մարզ, քաղաք Սիսիան

Սիսիանի համար 5 հիմնական դպրոց, 6-րդ <<ա>> դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Մանասյան Աննա Կորյունի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023-2024» ուսումնական տարի

# ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը** ) Դասարանը բաղկացած է քսանյոթ հոգուց: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն լավ ընդունակություններ: դասարանի 25 գնահատվող աշակերտներից 13-ը 5-րդ դասարանն ավարտել են գերազանց առաջադիմությամբ: Դասարանում կան գերակտիվ աշակերտներ, որոնց ուղղությամբ մեծ ախծատանք է կատարվում: Ընդհանուր առմամբ համախմբված են: Դասարանում չկան սոցիալական վատ վիճակում գտնվողներ: Երկու կապկու աշակերտներից մեկը տնային ուսուցում է անցնում, մյուսը հաճախում է դպրոց: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն:

2. **Ուսումնա-դաստիարակչական կատարված աշխատանքները ուստարվա ընթացքում** Ուսումնա-դաստիարակչական նպատակով մշտապես ուշադրության կենտրոնում է եղել աշակերտների վարքն և ուսման առաջադիմությունը: Հրավիրվել են ծնողական ժողովներ, որոնք նպաստել են աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ կատարվել է առանձին աշխատանք, էականորեն շտկվել են թերությունները: Աշակերտների մոտ ձևավորվել են բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

## 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն.** <<Հայ եկեղեցու պատմություն >> առարկայի դասաժամերին զուգահեռ կազմակերպվել է էքսկուրսիա դեպի մոտակա

կավագործության արհեստանոց, այնուհետև տարեվերջին այցելել են Խոր Վիրապ վանական համալիր, որտեղ աշակերտների մոտ սերմանվել սեր և հարգանք հայեցիության և քրիստոնական արժեքների նկատմամբ:

**3.2 Գեղագիտական դաստիարակություն <<Էթիկա>>** ֆիլմի և արհեստանոցներ այցելելու միջոցով ցուցադրվել և բացատրվել է, թե գեղեցիկը և բարեվաքությունը ինչ դեր ունեն ներկայիս կյանքում:

**3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն** Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ:

**3.4 Ֆիզիկական դաստիարակություն** Հետևողական աշխատանք է տարվել ֆիզկուլտուրա առարկայի դասապրոցեսին ակտիվ մասնակցություն ապահովելու ուղղությամբ: Դասարանի 4 աշակերտներ մասնակցել են միջդպրոցական սպորտլանդիային:

**3.5 Աշխատանքային դաստիարակություն** Աշակերտները շատ ակտիվ մասնակցել են համապետական շաբաթօրյակին: Դասարանական ակտիվ հերթապահության շնորհիվ ձևավորվել է այն գաղափարը , որ յուրաքանչյուրը պետք է կարողանա մաքուր պահել իր շրջապատը:

**3.6 Բնապահպանական դաստիարակություն:** Կազմակերպվել է էքսկուրսիա դեպի բնության գիրկը և այդ ընթացքում ծանոթացել են բնապահպանական մի շարք խնդիրների , որոնք առկա են իրենց շրջապատում:

**4. Դպրոց-ընտանիք կապը** Մշտապես ապահովել է ծնող-դպրոց-ընտանիք կապը: Ծնողները հաճախակի այցելություններ են կատարել դպրոց և ներկա եղել տարբեր դասաժամերի դասապրոցեսների:

# ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

| Անցկացման օրը | Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը | Կատարողներ |
|---|---|---|
| 20.09.23 թ. | Զրույց անկախության մասին | Դասղեկ, աշակերտներ |
| 05.10.23 թ. | Միջոցառում՝ նվիրված ուսուցչի տոնին | Դասղեկ, աշակերտներ |
| 06.12.23 թ. | Զրույց և քննարկում երկրաշարժի և այլ բնական աղետների վերաբերյալ | Դասղեկ, բնագիտության ուսուցիչ, աշակերտներ |
| 24.12.23 թ. | Ամանորյա տոնահանդես | Դասղեկ, դակ, աշակերտներ |
| 28.01.24 թ. | ֆիլմի դիտում <Հայոց բանակ> թեմայով | Դասղեկ, աշակերտներ |
| 07.03.24 թ. | Ցերեկույթ նվիրված մայրության տոնին | Դասղեկ, աշակերտներ |
| 04.04.2024թ | Զրույց հանդուրժողականություն թեմայով | Դասղեկ, հոգեբան |
| 08.05.24 թ. | Հաղթանակ և պարտություն թեմայով զրույց | Դասղեկ. աշակերտներ |

## ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Ծանոթանալ աշակերտներին, բացահայտել նրանց ընդունակությունները | սեպտեմբեր | աշակերտ դասղեկ |
| II | բացատրել հիգիենիկ նյութերի, ախտահանիչ | սեպտեմբեր | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| | պարագաների,օգտագործման կարևորությունն ու անհրաժեշտությունը կանոնները | | |
| III | Դասարանում առողջ մթնոլորտ ձևավորել, հետևել աշակերտների առաջադիմությանը և վարքին | սեպտեմբեր | աշակերտ դասղեկ |
| IV | <<Կարողությունների հստակեցում >> թերթիկի միջոցով հստակեցնել թե ինչ կարողություններն են ավելի զարգացած: | սեպտեմբեր | աշակերտ դասղեկ |
| V | << Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ: | սեպտեմբեր հոկտեմբեր | աշակերտ դասղեկ |
| VI | << Իմ հայրենիքը>> թեմայով շարադրություն | հոկտեմբեր | աշակերտ դասղեկ |
| VII | Զրույց <<Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>> նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները: | Հոկտեմբեր | աշակերտ դասղեկ |
| VIII | << Իմ դասագիրքը>> թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել դասագրքերի խնամքով պահելու անհրաժեշտությունը: | հոկտեմբեր | աշակերտ դասղեկ |
| IX | Հետևել աշակերտների առաջադիմությանը, խրախուսել լավ առջադիմություն ունեցողներին | նոյեմբեր | աշակերտ դասղեկ |
| X | Հետևել էլեկտրոնային մատյանի գրանցումներին և ծնողների իրազեկվածությանը | նոյեմբեր | աշակերտ դասղեկ |
| XI | <<Գնահատիր ինքդ քեզ>> նպատակն է արժևորել արժե համակարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն: | Նոյեմբեր | աշակերտ դասղեկ |
| XII | <<Ես և իմ շրջապատը>> թեման հնարավորություն կընձեռի ճանաչել իրենց շրջապատող անձանց և շտկել թյուր կարծիքները: | նոյեմբեր | աշակերտ դասղեկ |
| XIII | <<Բնական աղետներ>> ծանոթանալ բնական աղետների տեսակներին և իմանալ, թե ինչպես պաշտպանվել | Դեկտեմբեր | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XIV | Այգ Սիսիանի սուրբ հովհաննես եկեղեցի | դեկտեմբեր | աշակերտ դասղեկ |
| XV | Ամանօրյա նախապատրաստական միջոցառումներ | դեկտեմբեր | աշակերտ դասղեկ |
| XVI | <<Փոքրիկ պատմություն հանդուրժողականության մասին >> : | դեկտեմբեր | աշակերտ դասղեկ |
| XVII | <<Ազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները | հունվար | աշակերտ դասղեկ |
| XVIII | Ֆիլմի դիտում << հայոց բանակ >> թեմայով: Քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորենք բանակի դերը հայ ժողովրդի կյանքում: | հունվար | աշակերտ դասղեկ |
| XIX | << Գաղտնապահություն և ստախոսություն>> թեմայով քննարկում | հունվար | աշակերտ դասղեկ |
| XX | << Պատիժ և խրախուսանք >> քննարկում ծնողների հետ | փետրվար | ծնողներ,աշակերտ դասղեկ |
| XXI | << Ինչպես վարվել աղբի հետ >> օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա: | փետրվար | աշակերտ դասղեկ |
| XXII | Զրույց վարքի, կարգապահության և հերթապահության վերաբերյալ | փետրվար | աշակերտ դասղեկ |
| XXIII | Հանդիպում մանկական տեսուչի հետ | Փետրվար | տեսուչ, աշակերտ դասղեկ |
| XXIV | << Ինչու է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ: | մարտ | աշակերտ դասղեկ |
| XXV | << Ապագայի ծառը >> խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները | մարտ | աշակերտ դասղեկ |
| XXVI | << կոնֆլիկտներ>> թեմայով զրույց | մարտ | աշակերտ դասղեկ |
| XXVII | << Քննարկում հոգեբանի հետ >> | ապրիլ | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XXVIII | << Պատասխանատու աշակերտ >> աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինի ցանկացած աշակերտ: | ապրիլ | աշակերտ դասղեկ |
| XXIX | << Պետք է արդյոք, խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք | ապրիլ | աշակերտ դասղեկ |
| XXX | << Հայոց Մեծ եղեռն >> թեմայով զրույց: Աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն: | ապրիլ | աշակերտ դասղեկ |
| XXXI | Կազմակերպել էքսկուրսիա դպրոցամերձ այգի: Ծանոթանալ այնտեղ կատարվող աշխատանքներին | ապրիլ մայիս | աշակերտ դասղեկ |
| XXXII | <<Օրվա ռեժիմ>> ներկայացնում են աշակերտները | մայիս | աշակերտ դասղեկ |
| XXXIII | Նախապատրաստում տարեվերջյան ամփոփմանը | մայիս | աշակերտ դասղեկ |
| XXXIV | Կազմակերպել էքսկուրսիա դեպի Օշական | մայիս | աշակերտ դասղեկ |